

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
օտակակ	6 "
վեցամսեայ	6 "
Արասահմանի	
համար արեկակ	15 "
վեցամսեայ	8 "
Ամերիկայի համար	
օտակակ	3 ֆր.
վեցամսեայ	1.50 "

Մանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. երեսին առաջին անգամներու համար 20 0/0 գնդի կրչայ :

Վառնայի համար
ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐՔԻՆ

Նամակ եւ դրամ դրկից
խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
"Шаржунъ"
Варна

Redaction du journal
"Charjoun"
(Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար
ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արասահմանի համար
ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութեան և լեզու
սրբիչ

ԼՐԱԳԻՐԱԶԳԱՔԻՆ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՎՇԱՐԻ ԵՒ ՇԱՐՔՈՐԵՐԸ

ՇԱՐՔՈՐԵՐԸ Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ԿՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԷ

ՎՐԷՃ

Դարձնա՛լ արիւն, կարմիր, տաք, հայու արիւն... դարձնա՛լ ողբեր, սիրտ մորմոքող, կրծող, խելագարեցնող ողբեր... հայու ողբեր...

Ճակատագի՛ր, հայու ունեւնա՛տագիր...

Այդ դ՛ու գատէ, ընթերցո՛ղ... փախչիլ թրքական սպանդանոցէն՝ ուսական դժոյքին մէջ իյնալու համար, Համբարձման մարգարէի կառավարութեանն ու նազըմի հրէշային տանջանքներէն խուսափիլ՝ անորակելի մուսթիկ ցարի մը անիշխանութեան քառսին և ցած, ստրուկ նակաչիւձէնքու արիւնախում քմահաճոյքներուն ենթարկելու համար ազատ չըլլալ թուրքի սուրէն եւ գնդակէն թէ հոն եւ թէ հոս. թիւրքահայ և ուսահայ ստիպուած ըլլալ արիւնի տուրք վճարել, բաւ է որ վերջապահութիւնը հայ ըլլայ... օ՛, չափազանց է արգէն...

Արիւն Պոլսոյ մէջ, արիւն Սասնոյ մէջ, արիւն եւ կովկաս Բագուի սալայատակներուն վրայ, կովկասիոյ երկնքին աակ՝ այրող հայ տուններուն, հայ մարդու մարմիններուն սեւ ու թանձր մուխով պատած երկնքին տակ... այդ արիւնի ծովացումին մէջ միտքը կը պլտորի, զայրոյթը, անզօր բայց անդիմադրելի զայրոյթը՝ կեռայ, կը լեռնանայ, ու մէկ բառ մը միայն կրնայ զայն պարփակել:

Վրէճ... Բայց ո՛ւրկէ... իր անանական բնազդներուն և տգիտութեան շնորհիւ վայրագ ու մարդասպան կառավարութեան մը գծուծ պաշտօնեայի ձեռքին խաղալիք, անզգայ, անգութ գործիք մը դարձած պարսիկ ամբոխէն:

Այդ պատմական ահաբեկի ոճրագործութիւնը օղիի մշուշով օղտացած աչքերով գիտող տխմար մուսթիկ զինուորէ՞ն, ոստիկանէ՞ն...

Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Կողկասի մեր ընկերները թող չի քննան արդարադատութեան յոյսերով, անաչառ գատարաններու հեռանակարներով, պաշտօնական քննութիւններու անամօթ ու խայտառակ յայտարարութիւններով...

Հայութիւնը մորմոքող, իր հեռաւոր անկիւնէն անզօր կերպով բռունցքները սեղմող և միայն անէմքներ արտայնչող հայութիւնը միակ յոյս մը ունի, միակ բան մը կրնայ զայն սփոփել, վայրկեանապէս մոռցնել անոր իր նոր վշտերը, նոր հարածները:

Այդ յոյսը իսկական ոճրագործին շուտափոյթ օտաակումին լուրը ստանալու յոյսն է:

Այդ լուրը միայն կրնայ գոհունակութեան գառն ժպիտ մը խաղացնել անոր մուռլ գէմքին եթէ գեռ կարելի է անոր ժպտիլ: Սո, և ինձ նման հազարաւորներ են աչքերնին յառած կովկասեան ընկերներու վրան:

Արգետք վրէժի իրագործման լուրը շուտով կուգայ մեր այրած սրտերը զովացնելու:

Կապան՝ ք... ՀՐԱՆՏ
Բարիք. 26 փետր.

ԵՂՎԱՅՐԱՎԱՆ, ՅՈՅՅԵՐԸ ԹՅԼԻՍՈՒՄ

— () —
Բ.

(Թիֆլիզի մեր ոռչխասակցեան)

Փետրվարի 14 ին, երկուշաբթի օր, առաւօտեան ժամը 10ից սկսեցին կողբել քաղաքի խանութները եւ մինչեւ ժամը 1ը կողբուած էին բոլոր խանութներն ու արհեստանոցները, ամէն տեղ, Ոչ մի բացառութիւն չը կար. քաղաքը ամբողջովին արտասովոր շարժման մէջ էր. կարծես մի հսկայական տօնախմբութիւն լինէին կատարելիս. հսկայական շարժումով առաւօտից ի վեր քաղաքի բնակչութիւնը՝ հայ, վրացի, թուրք եւ մասամբ ուրա, խմբերով շտապում էին դէպի վանքի մայր եկեղեցին. ժամը 11ին վանքի ընդարձակ գաւթութեամբ այլեւս տեղ չկար եւ ուղեցողները կանգ էին առնում դռան մօտ ու

հետզհետէ ծաւալուելով, լցնում էին մօտիկ փողոցները: Ո՛վ տեսել է Թիֆլիսը թող զաղափար կազմէ ժողովրդի բազմութեան մասին. վանքի գաւթում ժողովուրդը լցուէլ էր այն աստիճան խիտ, որ մարմնային մի հսկայ զանդուած էր կազմուծ. ժողովրդով լցուել էին եւ վանքի դռան փոքրիկ հրապարակը. մեծ եւ փոքր վանքեան փողոցները նաեւ սալաթաքի բազարը. ինձ թուում է եթէ լինէր միտեղ, որ պարուհեկ կարողանար Թիֆլիսի ամբողջ բնակիչները, ոչ մէկը չէր բացակայի այդ տօնախմբութիւնից. կարելի է ասել, որ վանքի գաւթում եւ փողոցներում հաւաքուած բազմութեան թիւը կը հասնէր մօտ 15 հազարի:

Ո՛վ կըսպասէր... ո՛վ կըսպասէր, որ խեղդող մթնոլորտում, մշտական ահ ու սարսափի մէջ պահուող Թիֆլիսի ժողովուրդը, այս արիւնոտ օրերում, այդպիսի մի յայտնագործութիւն կանէ. կատարելապէս անսպասելի, Փետրվար 18ի հաւաքուած բազմութեան առաջ մենք մնացել էինք ապշած եւ այսօր նրանից աւելի մեծ բազմութիւն ենք տեսնում. ո՛ւր ենք մենք. չենք հաւատում մեր աչքերին. միթէ՞ սա մեր ամէնօրեայ ժողովուրդն է օ՞, նա է, նա՛ ծառաւի եղբայրութեան եւ ազատութեան. հազիւ յարգահոտ արեան զընով խել է մի երկու օր, որ չեն շառայում նրա գլխին ոստիկանների եւ բարբարոս կազակների մտրակները. ահա նա եկել է ասելու, որ բոլոր ճշուածներս եղբայրներ ենք, առանց ազգի եւ կրօնի խտրութեան. նա եկել է ցոյց տալու, որ մօտ է ուրա միապետութեան խարխուղ գաւհի անկումը, որ ժողովուրդը այնքան հասունացել, ինքնագիտակցութեան է եկել, որ միապետական գաւհի անբարեկեցիկ վրայ կարող է բարձրացնել ժողովրդական ինքնավարութիւնը:

Այդ անսպասելի յայտնագործութիւնը միանգամայն սրբագործեց ազգերի համեմատութիւնը կովկասում. այն, ինչ որ կատարուեց երկուշաբթի օրը Թիֆլիսում, էլ չենք տեսնի, Յոյսերի, լարուած մտքերի, արագ բռնկող կրքերի թուլեցում, ո՛վ կըսպասէր, որ այդ 15 հազարանոց զանազան ցեղերից կազմուած բազմութիւնը, կարգապահ ու կրթուած կը լինէր, ինչպէս մի հոգի. ամբողջ վեց ժամից աւել ժամանակը, որ այդ ահագին բազմութիւնը համարեաթէ խմբուած անցկայրեց, ամենաաննշան մի շփոթութիւն, անկար-

գութիւն չառաջացաւ:

Այսօրուայ հոգեհանգիստը կայացել էր մասնաւորապէս վրաց ուսանող երիտասարդութեան նախաձեռնութեամբ. պատարագին ներկայ էին վրացի հոգեւորականներ, շոգեհանգստի արարողութիւնը փետրվարի 13ից աւելի փառաւոր կատարուեց յետոյ սկսեցին ճառասուտութիւններ, ամենքը միարար նաստատելով միեւնոյն երկրում ապրող ազգերի բարեկամական յարաբերութիւնները եւ Բագուի արիւնահեղութեան պատճառի ուր լինելը. Պօսեցին շատերը, ամենից շատ վրացիներից. վանքի գաւթում միաժամանակ մի քանի տեղեր ճուրղ էին խօսում. ժողովուրդը լսում էր հանգարտ, ուշագիր եւ բուռն ծափահարութիւններով եւ ուսանելով մեծարումէր ամէն մի ճառասուր. վրացի ուսանողների խնդիրքով վեհափառը իւրայիններով երեւաց ժողովրդին եւ ահագին ցոյցերի առարկայ դարձաւ:

Ժամը 2ից աւելել էր, երբ ժողովուրդը սկսեց դուրս գալ վանքի գաւթից, Բագուի թիւնը չէր վայրում այլ հոսում էր. մենք սարուած էինք հոսանքի հետ, առանց տաներս գետնին զննու. չեմ կարող նկարագրել թէ ինչ էր ներկայացնում այդ բուրբալի քաղաքը. ժողովրդի այդ շարժումը նմանում էր մի հսկայական հրբարխային լաւայի. որ դուրս վրթելով ողողում է ամեն տեղ եւ ամեն ինչ, ժողովուրդը այդպէս մի քանի փողոցներով հեղեղի նման գլխից դէպի վրաց Սրօնի մայր եկեղեցին. Պրովասալանի հոգեւորականութիւնը այստեղ էլ հանդէս էր եկել իր զգեւրի այլաբանութեամբ. այդ մտնութիւն չինովելիները, յանձին լեզարքոսի, մերժել էին. ո՛չ միայն հոգեհանգիստ կատարելը, այլեւ եկեղեցու դռները փակել էին ժողովրդի առաջ, որը այս տեսնելով, ուղեւորուեց դէպի թուրքերի մէջիդը. Մէջիդը ու մէջիդի ողորմելի փողոցը. ո՛ւր կը տեղաւորուէին այնքան բազմութիւնը, որ խուռն հոսանքով գալիս էր հա գալիս՝ անվերջ, անհատում: Պէտք էր մի տեղ, որ հաւաքել կարողանար այդ ահագին բազմութիւնը եւ ժողովրդին առաջնորդեցին թուրքերի գերեզմանատունը, որ գտնուում էր մօտիկ լեռնալանջում. անմիջապէս այդ ահագին լեռնալանջը ծածկուեց շարդկանց բազմութեամբ եւ թուրքիկ թերթերի անձրեւ տիղաց: Այդ բազմահազար ժողովրդի մէջտեղ ամբողջ բարձրանալով, նախ խօսեց Շէյխուլիսամի տեղապահը,

ապա հայոց վարդապետը եւ դրանցից յետոյ շատ վրացիներ . ու յազարուէր էր մի թուրք սպայի կարծ ճար . նա առաջ . սերհեքսք մեզ ինչ որ քրիստոս . յարգելի գրապիներ . որ ակամայից գործեցինք այդ մեծ սխալը . թափելով անմեղ աւելն . երդուում հմ . որ մենք մեղաւոր չէինք կատարուած ոճրագործութեան մէջ . խեղճ ամբողջին մոլորեցրել էր մի զբզուելի զաւարթութիւն . ահա այց զաւարթութիւնը պէտք է փնտռել միացած ուժերով եւ խեղդամոհ աւելն . նա իջաւ ամբողջից եւ նրան ձեռնարկ վրայ . ահագին ուռաների ուղեկցութեամբ տարան . երբ ճառերը վերջացել էին նորից անձրեւի նման անդազին պրօկլամատիւնները ուռաներով . պակասներով ժողովարար ճանապարհ գրեց ճառախօսներին . ձեռնարկ վրայ տարան եւ մի վրացի ճառախօսի :

Լեւոնաւանդից ժողովուրդը երգելով իջաւ քաղաք եւ մի քանի խումբերի բաժանելով . որոտագին երգելով եւ ուռաններով շրջեց քաղաքի շահմանօր փողօցեցը մինչեւ երկկոյշ շրջալի էր այդ որբ քաղաքում . Բաղնիկ էին բոլոր աների դռներն ու լուսամուտները . ժողովուրդը ամեն անդ դիմաւորում էր այդ ցոյցերին սրտագին գոհունակութեամբ եւ ծիծաղերեալ :

Այնքան հսկայ է ժողովուրդը . . . Բաղնիկ ամբողջին ստոր բնազդները պրօծեցին անպատմելի ոճիրներ . Իսկ թիֆլիսում նոյն ամբողջի գեղեցիկ գգացմունքները յաւերժացրին երդարթութիւնը եւ տուն փետրուար 28ի եւ 14ի նման հրաշալի օրեր :

Եւէկ փետր. 20ին . հայ միջնակարգ աշակերտների նախաձեռնութեամբ հոգեհանգիստ կատարեց վրաց եկեղեցում . ահագին բազմութիւն . մօտ 10000 . ժողովրդի ներկայութեամբ . Հոգեհանգստից և ճառերից յետոյ ժողովուրդը հսկայական թափօրով խաղաղութեամբ անցաւ Գոյովինսկի Գրուպկեայի և ապա ցրուեց : Թիֆլիսի այս նշանաւոր առնամաքութիւնը շերտ մեղ իրաւունք են ստալիս կարծելու . որ ինչպէս արեւմտեց գրոման շի կարող կրկնուել որ և է ուրիշ անգամ : Այսպիսի խաղաղասիրական ցոյցերի լուրեր հեռագրեալ ստացուում

Ա. ԱՍՏԻՏԵԱՏՐՈՎ
ՎԻՃՈՐԻԱ ՊԵՂՈՎ Ս.
(Տար. 690 քիւիկ)
Ինչպէս Վիկտորիա Պավլովնայի առնամաքութիւնը անցաւ շատ ուրախ եւ աղմկալի . նա այնքան հեռագիր ձեռնարկ որ քառասուն տարուան գործունէութեան յոբելեան տօնող 70-րդ տարին .

ին և մեր երկրի ուրիշ շատ տեղերից : Ամեն տեղ էլ ձեռն կաթողիկոսի հետադարձ-ընթացքով համաձայն . հայ հոգեւորականութիւնը . թուրք հոգեւորականների հետ միասին . երկու ժողովուրդների մէջ եղբայրութիւն և համերաշխութիւն են քարոզում : Թիֆլիսից շատ նշանաւոր եւ ազդեցիկ հայեր ցրուել են շրջակայքում առաջն առնելու համար ժողովրդական ընդհարումներին : Յուսանք որ լարուած գլխաւին որոգայթները ոճրագործին չեն հասցնի իր նըպատակին :

ՅԱԼԱԿ
Թիֆլիս . 21 փետր

ՎՏԱՆԳ ԹԵ ՅՆՈՐԲ

Մեծարժուէր մեր թիւին մէջ կարդացի Պուլկարիոյ թաղական խորհարարներուն պատգամարարանէ ուղղեալ գրութիւն մը և Պուլկարի պուլկարական գործադատ քրին արտաստիստիկ թարգմանութիւնը :

Այս գրութիւնը ինչպէս մեր պաշտօնական մարմիններու նոյն պէս մեր ժողովրդին մէջ . յարուցած է տագնապ մը . կամ աւելի ճիշդ յուսահատութիւն մը մեր վարժարաններու նկատմամբ :

Կը լսենք որ Թուրքիայի թագ. խորհարարը այս վայելէն միտած գիմում բրած է խնդրելու համար օրէնքին գործադրութեան յետաձգումը տասը տարուան շափ :

Միեւնոյն ատեն Կարմուռի մէջ այդ գրութիւնը և թարգմանութիւնը բերող պարոնը կոչ կընէ խմբագիրներուն . որ այս հրատապ խնդրով զբաղին և անմիջական դարձան մը գտնեն :

Արդ երբ այս խնդիրը այլեւս լուրի հանգամանք մը առած է և լուծում չը չպահանջէ անարդ պիտի ըլլայ նախապէս Տարցունել թէ ինքնին այս գրութիւնը բոլորական է մեզի . համոզելու այս պիտի իրականութեան գիտնալով :

ո եւ է գործիչ կը յօխանէր : Ճաշ կերոյթն անգամ շատ փոքաւոր էր որովհետեւ իշխան Բէյութիւնին այն իշխանիկը որի պատճառով նախանձուտ կէկտովը յարգիւնում էր Վիկտորիա Պավլովնային . չէր մտադել իր խոհարարի հետ բերել փարթամ ամանեղէններ եւ ճամբորդական մի արտասովոր խոհանոց :

Այդ իշխանիկը ինձ շատ անուշ մարդ երեւաց . ճամբորտ կիտակիր ինչպէս բոս ազնուականութեան մեծ մասը . որոնք մեծ մականուններ ունեն . բայց այնքան խելացի եւ կիրթ են . որ իրենց ծագումը ի ցոյց չեն գնում :

Երկուսիս ուշ . հրատարակութիւնից յետոյ . որր փարթամօրէն տեղի ունեցաւ լեզուի մօտ . շնորհիւ Եէլէպովի ջանքերի . եւ . Բէյութիւնիկին ու Չիքրիցիւր նստել էինք մութ ձեռնիկի մէջ . ուր հազիւ էին թափանցում աստղածով երկնքի նաւը շարժվեցրը .
— Է՛հ . իշխան . ծաղրելով հարց

թեան և այն ալ յառաջիկայ տարեշրջանի մէջ :

Երկրին դպրոցական օրէնքներու մէջ ամենէն վատագաւոր յօդուածը մեր վարժարաններու համար 10րդն է . որուն տրամագրութեամբ բոլոր պուլկարահայատակ ծնողաց զաւակները պէտք է ստանան իրենց նախական կրթութիւնը պուլկար վարժարաններու մէջ :

Վերոյիշեալ օրէնքը որ արգէն գոյութիւն ունէր գալթականութեան առաջ . 1894ին . ինքը կը բաւէր մեր վարժարանները փակելու :

Տասը տարի է որ այդ օրէնքը չէ գործադրուած ու էտեղ մը ու է վարժարանի նկատմամբ և ցորջափ անոր չը գործադրուելու պատճառը ուժ ունենայ — և պիտի ունենայ շատ տարիներ դեռ Պուլկարիոյ համար — մենք կրնանք ապահով ըլլալ թէ այսպիսի վտանգ մը պարզ պէտք մտայցածին ցնորք մըն է :

Եւ օրէնք մը որ մտայցած է անգործագրելի ըստ ընդունուած սովորութեան կը նկատուի չեղեալ :

Ինչեւնոյն ատեն պէտք չէ մոռնալ թէ մինչեւ անգամ եթէ այս արտաքին պատճառը վերնայ . նորէն այս տեսակ օրէնք մը անգործագրելի պիտի մնայ . որովհետեւ մինչեւ այն ատեն Պուլկարիոյ մէջ դեռ նորածին բամկավարական կուսակցութիւնները և ուժերը պիտի զարգանան . պիտի սծին . եւ կրին կատարելութեան վրայ բաւականաչափ սղղեցու թիւն պիտի բանեցնեն և պիտի կարողանան փոքրամասնութիւններու իրաւունքները լայնացանել :

Օրէնքին մէկ ուրիշ քոյրամարտ կողմակի կե պով մեր վարժարաններուն կը սպասուայ ուսուցիչներէ պահանջուած քէնզն է . այս ցէնզը պուլկար վարժարաններուն ցէնզին պէտք է համապատասխանէ :

րեց Չիքրիցիւր . դեռ տանտիրուհուց բաժինը շատ ցար :

Իշխանը գլուխը ձոնով .
— Այ . բա երեւոյթին յետաձգում է վաղան :

— Ձեզ ինչի՞ համար . հետաքրքրվեցի ես :

— Ամանեղէնների համար . իշխանի փոխօրէն պատասխանեց Չիքրիցիւր . ինչի՞ հարկեր բուրխանոց ամանեղէն է բերել . լացարանի համար արգէն քանի բորոզ տարին է որ մեզ հալածում է :

— Հալածում է . բայց լացարանը մինչ օրս էլ խնամքով պահպանում է . ծիծաղելով պատասխանեց իշխանը : Այնչէ չէ կարելի անել կին է . նազ մայրը . բայց այս ամանեղէնի փոխակի մասին . մէջնորս առած . վախճուում եմ . թէ արգէն Արիւսային հրամայած լինի յարող վաթաթել եւ վաղը յանձնել վանիչ կային որ քաղաք տանի ու երեք անգամ աւելի աման գնով ծախի ու եւ

պետներուն ցէնզին պէտք է համապատասխանէ :

Եւ ճիշդ այս յօդուածն է որ Պատրիարքարանի գրութեան մէջ կը յիշուի և հետեւաբար մենք գլխաւորաբար անոր վրայ պիտի կեդրոնացնենք մեր ուշագրութիւնը :

Այս օրէնքը ինքնին շուսի այն միտումը . զոր կը պտնենք առաջինին մէջ . Անով օրէնագիրը չէ ունեցած երբէք վարժարանները փակելու անուղղակի նպատակը : Ընդհակառակը օրէնագիրը աւելի ոգեւորուած և առաջնորդուած է . ապահովելու համար երկրին սահմանագրութեան մէջ նշանակուած նախնական կրթութիւնը իր նոյնութեամբ մասնաւոր վարժարաններու մէջ : Այս կրթութիւնը Պուլկարիոյ պէտք սահմանադրական երկրի մը համար կենսական պէտք մը կը հանդիսանայ . քանի որ այս մասնաւոր վարժարանները բոլոր վարժարաններու մէկ քարորդ մասը կը կազմեն :

Օրէնքը ուշ կամ կանուխ պէտք էր արգէն յառաջ գար որոշելու համար պետութեան յարաբերութիւնները մասնաւոր վարժարաններուն հանդէպ :

Օրէնագրին մտքին մէջ այս օրէնքը Պուլկարիոյ պետական մէկ պարաքն էր և ոչ թէ ազգամուտական արտայայտութիւն մը : Եւ եթէ մեր վարժարանները միայն ըլլային այս տեսակ օրէնքի մը պէտքը չպիտի զգացուէր այնքան և ապահովաբար անիկայ ծնունդ չը պիտի առնէր : Բայց տաճիկներու և յոյներու ստուար մեծամասնութիւնը . որ զգալի կեդրով կազմէ Պուլկարիոյ քաղաքական և վարչական կեանքի վրայ բնական կերպով այս օրէնքը ստեղծեց :

Սակայն ինչ վիճակի մէջ գըտաւ օրէնքը այս վարժարանները

ամանեղէնաւաճառի : Բայց այս անգամ ես որոշել եմ չը գիջանել . եթէ նա ծախի այս ամանեղէնը . ես կը բերեմ երկրորդ . երրորդ . չորրորդ անգամ . մինչեւ որ այդ կամակորին կը յաղթանարեմ : Վիկտորիայի Կիւպէնէսութիւնը շատ հետաքրքրական եւ արտակարգ է . բայց վերջապէս նա էլ մի օր պէտք է տան կարգ ու սարգ ունենայ մարդու պէս ապրելու յարմարութիւններ :

— Ահ . այդ դուր իմ մասին էք խօսում . անսպասելիօրէն լուրից Վիկտորիայի ձայնը . որ երկու քայտեղ նից հետու երեւաց ինչ որ չընուցած քերկար ու նիհար մէկի հետ : Լայն գլխարկից եւ նետարային հարկուից հասկացայ որ Բուրուէն էր :

— Գրաւ կը գնեմ որ իմ մասին է իք խօսում . շարունակեց Վիկտորիան իր կապուկով . թաղը թողնելով և մեզ մօտ նստելով . Որովհետեւ սու իշխանիկին քանաչում էլ չէ երբ մօտը յարմարութեան կարգ ու ցոյցերի

ՏՕՊՐԻՉԻ ՀԱՅԿԱԿ. ԸՊԹԵՐՑԱՐԱՆԸ

Անգուլ ջանքերով վերականգնած այս չէզոք ընթերցարանը... որ ապրելու յոյ՛ր բնաւ չէր տար մեր Տօպրիչցի յուսեաններուն...

Ընթերցարանը տեղւոյս հայ հասարակութեան նոյնիսկ տղէտ գասակարգին համախորհրդով կը գրաւէ հետզհետէ, և մենք, այս երեւոյթը չենք ուզեր բացատրել...

Ընթերցարանի շարժառիւթները անդամներուն թիւը, ըստ ենթադրութեան 100ի է մերձեցած, և կամ նուազ քանակութեամբ մը առաւել է յիշեալ թիւէն...

Ընթերցարանի հասոյթաբեր ազդիւրներուն առաջինն է շարժառիւթը. երկրորդ տեղը տրուած է ներկայացումներուն...

Շարունակելի

ԿՈՎԿԱՍԻ ԿԱՏՈՒԹԻՒՆԸ (Տեղեկութիւններ մեր աշխատակցէն)

Կովկաս փոխարքայութեան վերածուած է և Գալիցիոյ տեղ կառավարիչ նշանակուած է Վարանցով—Տաշկով:

Վրաստանի քանի մը գաւառներ զինուորական դրութեան մէջ գրուած են, նաեւ Պաքուի և Երեւանի նահանգը:

Պաքուի մէջ խռովութիւններու պատճառը քննող յանձնախումբի հայ և թուրք անդամները բողոքած են կառավարութեան այն մեղադրանքին դէմ, թէ խռովութիւններուն պատճառը կոմիտէները եղած են:

Փետր. 21, 22ին Երեւանի թուրքերը եւս կը փորձեն յարձակում գործել հայերու վրայ, բայց հայերը իսկոյն ամբողջ փողոցները կը տիրապետեն առանց կարգը խանգարելու:

Վրաստանի մէջ երկու գաւառներու մէջ կատարեալ ապրտամբութիւն կը տիրէ. կառավարութիւնը թնդանօթներով ապստամբութիւնը ճնշել կուզէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Եւմէնի ապստամբները գեռ կը յամառին, հոն դառնուած զօրքերը չեն բաւեր զանոնք ճնշելու համար. կառավարութիւնն կը տքնի շուտով զօրք հասցնել:

Պալատական պաշտօնեային խնդրին այնքան կարեւորութիւն չեն տար:

Քարափնիւ սեփականատէրութեան իրաւունքը շահեցաւ ընկերութիւնը. Սուլթանական որոշումը այդ խնդրի առթիւ արդէն տրուած է:

ՌՈՒՍԻԱ

Քուրսքի նահանգին մէջ գիւղացիական խռովութիւններ կան. փետր. 28ին թալանի տուեր են վաճառականի մը ազարակը, մեծ մասամբ երկրագործական պիտոյքներ յափշտակելով:

Ուրիշ քանի մը նահանգներու մէջ աւելի մեծ թալաններ տեղի ունեցեր են գիւղացիներու կողմէ:

Մենքի օրուան արիւնալի գէպքին պատճառով մեղադրուած սպանները բանտարկութեան դատապարտուած են իրր անուշադիր իրենց պաշտօնին մէջ, բայց աստիճաններէ զրկուած չեն:

Պօքետոնօսցէվի տան քովը ուսմը մը պայթեր է:

Ռուս մամուլը Անրիի գործերու մասին

«Պրիմիվիա վէստմոստի» թերթը հետեւեալը կը գրէ.— ոչ պատերազմին տխրալի ընթացքը, ոչ ալ ներքին անցքերու բարդ շղթան, որոնք շատ արագութեամբ կը յառաջանան մինչեւ հիմակ փաստ մը չը բերին, որ խօսէր ի զիստ ազգային ընտրեալներու ժողովի մը գումարման, որոնց պիտի յանձնուէր օրէնսդրութեան նախնական աշխատութիւնները համաձայն փետրվար 17ի հրովարտակին:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Օրուի բանակէն մարտ 7ին կը հեռագրեն թէ թէլիւնի գրաւումով ճարոնցիք տիրացան երկաթուղիի քով գտնուած ամենազօրեղ զիւրքին: ճարոնցիները մեծ ինքնավստահութիւն ունին, ուսնեքը նահանջելով կը փճանան. ճարոնցիք Քուրսքի առաջնորդութեամբ կը հալածեն ուսնեքը, Հալածումը դեռ կը շարունակուի և տասը մղոն տարածութեան վրայ շարունակ ընդհանումներ տեսնուած են:

Մարէշալ Սյաման Թոքիոյ կը հեռագրէ թէ ճարոնական բանակին ալ թեւը շատ մը ուս գերիներ և մեծ քանակութեամբ աւարտուեր է:

Ռուսական զօրքերուն նոր գլխաւոր հրամանատար Լինեվիչի միջամտութեամբ ցարը Քուրսքի կարգեր է առաջին զօրաբանակի հրամանատար: Ու վերջինս ալ պաշտօնը արդէն ստանձնած է:

Թօքիոյէն կը հեռագրեն թէ Մուքտէնի ճակատամարտին ըսկիւրը Քուրսքի ինք անձամբ կը վարէր Լաթար բլուրին պաշտպանութիւնը, և այդ միջոցին թնդանօթի սուսը մը կը պայթի և թեթեւ կերպով կը վիրաւորէ զայն:

Մարշալ Սյաման պաշտօնապէս Մուքտէնը յանձնած է չիւնական քաղաքային իշխանութեանց, քաղաքին մէջ հիմնելով զինուորական ոստիկանութիւն մը և պատուաւոր պահակախումբ կայսերական գերեզմանատան համար, որպէս զի գողութիւն չի պատահի:

«Թայմզ»-ը Մուքտէնէն կիմանայ որ ուսնեքը 400 թնդանօթ գետը նետեր են:

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆ. ՄՐՈՒԹԻՒՆ

(Շրջաբերական նամակ)

Ը ն կ ե Ր ն ե Ր

Ներկայ տարւայ համագումարը կը կայանայ ապրիլի 1ին. Շվեյցարիայի Քէրն քաղաքում:

Այդ առիթով խնդրում ենք բոլոր ուսանողական մարմիններին:

1) Հրաւիրել ժողով և ընտրել պատգամաւորներ (Կանոն. յօդ 10)

2) Որոշել այն հարցերը, որ ցանկանում են ենթարկել Համագումարի քննութեան:

3) Ուղարկել մեզ՝ Համագումարին դասախօսել ցանկացող ընկերների անունները, ինչպէս և դասախօսութեան վերնագիրը (յօդ. 18):

4) Ուղարկել վիճակագրական տեղեկութիւններ, «Տեղեկագրի» մէջ մտցնելու համար:

Այդ բոլորը պէտք է հասցնել ոչ ուշ քան մարտի 20ը, որպէս զի կարող լինենք «Օրակարգը» պատրաստել:

Պարտք ենք համարում աւելացնել, որ Համագումարը բանալու համար՝ անհրաժեշտ է ուսանողական մարմինների գոնէ պարզ մեծամասնութեան մասնակցութիւնը:

ԼիւձՈՐ ԿՕՄԻՏԷ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պօթոն հրատարակուող «Սրբաւար» Հայաստան շաբաթաթերթը գրեթէ թեւամբ ստանալու ուղղով Պուլկարիոյ եւ Ռուսիայի շնչակեան մեր մասնաճեղերը և ընկերները իրենց օրոշ հասցէներով պէտք է գրին նետեւեալ հասցէին:

Г. Танчо Пенювъ ул. Ошлченска № 1 ва X. X. X. Пловдивъ

Տօքիոյ թորոսեան կընդունի մէն տեսակ հիւանդներ, կէսօրէն վերջը ժամը 2էն մինչեւ 4 Բնակարանն է Փողոց Տունաւաքա թիւ 3

ՅԱԿՈՒ Կ. Հ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ (Սարապ) ՎԱՌՆԱ

Չանազան ընկերութեանց արժեթղթեր կը գնէ:

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатница „Взаимность“ Варна